

Շք. ԽԹ. օր Յիմանց: Լրումն է կարգի
տնօրինականացն յարութեան եւ Աւետա-
րանացն: ՂԿ 22.1-30: Գրծ 28.17-32: ՅԴ
1.17-25: ՅԿ 13.31--14.13: Մտ 24.1--26.2:
ՄԲ 14.1-26:

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՑ ՄԷԶ

Կիւթէնպէրկի զիւտը շուտով կետաքրքր-
ւեց Հայերը, որոնք նոյն իսկ 1512էն սկսեալ
մանր մանր գործեր սպառքեցին վենետիկի
մէջ:


Աստուածաշունչի առաջին տպագրութիւ-
նը կատարուեցաւ Հոլանտայի Ամսթերտամ
քաղաքին մէջ, Յակոբ Կաթսկիկոսի հրամա-
նով և Երեւանցի Ռսկան Արքեպիսոպոսի
ձեռքով 1666ին, պատկերազարդ փղեղիկ հը-
րատարակութիւն մը, որմէ քանի մը օրինակ
մնագրութի վրայ ալ տպագրուած է. այս մա-
զաղաթէն մէկ օրինակ կը պահուի Երուսա-
ղէմ, Հայոց Ս. Յակոբեանց Վանքի մատենա-
դարանին մէջ: Բանասիրօրէն անխնամ է այս
առաջին հրատարակութիւնը, որ նոյնու-
թեամբ տպագրուեցաւ 1705ին Կ. Պոլսի մէջ:
Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան
հիմնադիր Միսիթար Արսայ, 1733ին հրատա-
րակեց դարձեալ պատկերազարդ աւելի իննամ-
եալ Աստուածաշունչ մը. իսկ առաջին ընտիր
հրատարակութիւնը կատարեց Հ. Յովհաննէս
Զօհրապեան 1805ին, Վենետիկ, ըստ հնադար-
նիսիր ձեռագրաց: Ս. Գիրքը տպագրուե-
ցաւ նաեւ Ս. Պետերբուրգ (1817) Միլամփուր
(1817) և Վենետիկ (1860), նշանաւոր հայկա-

րան Հ. Արսէն Բագրատունիի իննամքով:
Հնգամատեանը տոտնձին տպագրուեցաւ 1892-
ին Կ. Պոլսի, Սուրբ Գրոց Ամերիկեան Ընկե-
րութեան ծախքով, նոյն ընկերութիւնը ամ-
բող Ս. Գիրքը հրատարակեց 1895ին, Կ.
Պոլսի, ըստ երբայական կանոնի: 1902ին էջ-
միածնի մէջ ձեռնարկ մը ելաւ քանի մը ֆու-
մա միայն լոյս տեսաւ իրրեւ փորձ և գործը
մնաց անկատար:

Իսկ ամբողջ Աստուածաշունչի աշխար-
հաբարը և հայերէն տառերով թիւրքերէնը՝
թիւրքախօս Հայոց համար, ինչպէս նաեւ Նոր
Կառկարանը, նոյն ընկերութիւնը, ըստ անգամ
տպագրուած է 1800ական թուականներէն ի վեր
Սուրբ Գրոց ամերիկեան և անգլիական ընկե-
րութեանց կողմէն՝ Նիւ Եորք, Կ. Պոլսի և
Զմիւռնիա:

Հայց ունին նաեւ Ս. Գրոց բառգիրք կամ
Համարարբառ, զոր պատրաստած է Երուսա-
ղէմի Ս. Յակոբ Վանքի Միաբան՝ Աստուածա-
տառիան Թադէոս Վրդ.: Այս գործը լոյս տե-
սաւ նոյն վանքի տպարանէն 1895ին: Իսկ ան-
կէ յառաջ, 1848ին, Զմիւռնիոյ մէջ հրատա-
րակուեցաւ միայն Նոր Կառկարանի համա-
բարբառը Ամերիկացիներու կողմէ:

Հայց կը տիրեն Ս. Գիրքը, և սկիզբէն ի-
վեր Ս. Գրոց մասին գրուած մեկնութիւն-
ները, ինչպէս Ս. Եփրեմի և Յովհան Ռսկե-
բեանի գործերը հայերէնի թարգմանուած-
են, գրեթէ զուգընթաց Ս. Գրոց հայերէն
թարգմանութեան: Ասիէ զատ Հայ Եկեղեցւոյ
վարդապետներ իրենք ալ գրած են մեկնու-
թիւններ և Ս. Գրոց պատմութիւններ մինչեւ
մեր օրերը:



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԿԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(14. 25-31)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. —

25 «Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձե-
26 զի հետ եմ: Բայց Միջեթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայ-
րը ձեզի պիտի զրկէ իմ անուանալս, ան ձեզի ամէն ինչ
27 պիտի սարկեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Թա-
ղադութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ
կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութե-
28 նէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք: Հսե-
ցեք ինչ որ ըսի ձեզի, թէ «Ահա կ'երթամ, բայց կըր-
կին պիտի դամ ձեզի»: Եթէ զիս կր սիրէք, ուրախ պի-
տի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ
29 մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը,
30 որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս
երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու դայ
այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանու-
թիւն ունի: Բայց աշխարհը պէտք է դիտնայ թէ ես
31 Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր
պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այս-
տեղէն»:

ՊԵՆՏԵԿՈՍՏԻ ՊԵՊԸ

(ՄԲԾԻ Բ. 1-14)

Ա. — Պենտեկոստի տօնին հրեական նշանա-
կութիւնը:

Պենտեկոստի տօնը Հասիկէն յիսուս օր
վերջը կը կատարուէր: Այս տօնը յիշատա-
կութիւնն էր մովսէսական օրինաց, որ
արուած էր իսրայէլի մարգարէին Եզրայասէ
եղբուն յիսուս օր վերջը: Միանգամայն
հունձքի կրօնադրեաց տօն եւս կը կոչուէր
Հրէից մէջ:

Ըստ մովսէսական օրէնքին, այդ օր ցո-
րենի նոր հունձքէն նկանակներ շինելով ըն-
ծայ կը մատուցանէին Աստուծոյ: Եւ միան-
գամայն հացերուն հետ մէկ տարեկան հօթը
անարատ դասեր և տրջաններն մէկ գաւա-
րակ և երկու խոյ կը մատուցանէին (Ղեւ. 16-18, Բ. Օրինաց ԺԶ. 9-10) իբր զսի:

Գ. — Ս. Հոգիին պարուստը:

Պենտեկոստի օրը տառքեղներ և հա-
ւատացեալներ, թուով ծոռ հարիւր քսան հո-
գի, միացեալ կ'ողոթէին վերնատունին մէջ,
երկինքէն յանկարծ տասակաշունչ հովի նման
ձայն մը լսուեցաւ: Ապա յամենաւս իջուներ
երևցան անոնց կրակի սփռերուն նման՝ ու-
րանք իջան ամէն մէկուն վրայ: Ահա այս-
պէս ամէնքը Ս. Հոգիով լեցուած սկսան
ուրիշ շեղանքի խօսիլ, ինչպէս Ս. Հոգին ի-
րենց խօսիլ կու տար:

25 "These things I have spoken to
you, while I am still with you. 26 But the
Counselor, the Holy Spirit, whom the
Father will send in my name, he will
teach you all things," and bring to your
remembrance all that I have said to
you. 27 Peace I leave with you; my
peace I give to you; not as the world
gives do I give to you. Let not your
hearts be troubled, neither let them be
afraid. 28 You heard me say to you, "I
go away, and I will come to you." If
you loved me, you would have rejoiced,
because I go to the Father; for the
Father is greater than I. 29 And now I
have told you before it takes place, so
that when it does take place, you may
believe. 30 I will no longer talk much
with you, for the ruler of this world is
coming. He has no power over me;
31 but I do as the Father has com-
manded me, so that the world may
know that I love the Father. Rise, let
us go hence.

Բ. — Առաքեալներու պատասխանիւնը Ս.
Հոգիին ընկունքու:

Երբ Առաքեալները Զիթնոսոց լուսնէն ի-
ջան, Երուսաղէմ եկան և ուղղակի վերնա-
տուն մտան: Հին Պետրոսի առաջարկին վրայ,
վիճակ ձգելով, Յուդայի սեղ Մատթիան
ընտրեցին (Գործք. Ա. 26), և այսպէս իրենց
թիւր կրկին տաներիս եղաւ:

Այս տաներիս աստքեղները, իրենց
հետ ունենալով Յիսուսի մօտը, սերիշ կէն
ուշակերաներ և հաւատացեալներ, վերնատան
մէջ միարանութեամբ ազսթքով կ'անցընէին
իրենց ժամանակը:

Համբարձումէն մինչեւ Պենտեկոստէ, այս
տասը օրերու ընթացքին միշտ ազսթք կ'ը-
նէին, քանզի Յիսուս իրենց այդպէս ընէլ
պատուիրած էր:

1. Պենտեկոստի օրը Հրեաներ իրենց
հունձքին երակայրիքը Աստուծոյ ընծայ կ'ը-
նէին, իսկ նոյն տօնին օրը, վերնատան մէջ,
քրիստոնէութեան հիմնադիրները իրենց կեան-
քերը Աստուծոյ նախընտրեալ իբր կենդանի դո-
կեր:

2. Առաքեալները Ս. Հոգիին օրհնու-
թիւններուն և պարզեւնորուն տրամուցան,
չտարբիւ իրենց ազսթքի և խոկամի պակե-
րուն: Ազսթքն է որ մեր հոգին կը վերայնէ
սա Աստուած և երկնային շարժներու հա-
ղորակից կ'ընէ մեզ:

3. Ս. Հոգիին անմիջապէս ազդեցութեան
ներքեւ, աստքեղները հիմնովին և հոպէս
փոխուեցան և նոր արարածներ դարձան: Ս.
Հոգին հիմա եւս կրնայ փոխել մարդոց
կեանքը երբ անոնք շիման զան անոր հետ:

4. Այս ներքին փոխախաթիւնը առա-
քեալներու կեանքին վրայ ճակատագրական
ազդեցութիւն ունեցաւ և անոնց ամբողջակե-
պին նոր ուղղութիւն տաւ: Անոնք քրիս-
տոնէական կրթութիւն մէկ-մէկ վիաները եղան և
իրենց կեանքին գիտով պաշտպանեցին իրենց
քարոզած ճշմարտութիւնները:

Կտակի ջարդը իւր զլիւսուր նոյստակը աւարտած կը սնուակը, աւարեալներուն բացարեւոյթ շարս գլխուսը միեթարութեան կէտեր, եւ սարգարանելով երեք առաքեալներուն միջանկեալ հարցումները: Սոսից ընթացքն ալ կը ցուցնէ թէ Յիսուս կ'ուզէր իւր ըսածները ամփոփելով կտակը փակել, եւ միեմաստանէն մեկնել: «Ահա՛, կ'ըսէ, ինչ որ ես ձեզի պիտի իմացնէի, քանի որ ձեզի հետ վերջին ժամերս կ'անցրնեմ: Ուրիշ իմացնելու եւ ներշնչելու կէտեր ալ կան, բայց անոնց վրայ երկարելու ստեն չի մտար, անոնք ալ կը թողան որ լրացնէ Միեթարիչը, զոր ինչպէս ըսի, Երկնուսը Հայրը իմ տեղս եւ իմ ինպրանքիս վրայ պիտի գրէ ձեզի. նա բոլոր մտացած կէտերն ալ ձեզի կը սորվեցնէ, եւ իմ սորվեցուցածները կը կրկնէ եւ ձեզի կը յիշեցնէ: Ուրեմն աչքեւս պիտի բաժնուինք, մնացէ՛ք բարեւ, իմ վերջին հրաժեշտի սղոյնս է. որ կու սամ ձեզի, խաղաղութեան եւ սղոյնի մաղթանքս կ'ընեմ: Խաղաղութիւն ընդ ձեզ, որդեակ'իք: Բայց այս ոչխոյնը, այս խաղաղութիւնը, զոր ես ձեզի կը թողում, աշխարհի մէջ սովորաբար խոստած կ'երպով չէ, վասն զի արդէն ձեզի յայտնեցի, որ ցուեր ու վիշտեր, նեղութիւններ ու ստատպանքներ կը թողում եւ ձեզ իմ մեկնելուս, ստեղծն, ինչպէս սիրտէն բսի, Այ՛ խոսովեսցիլն սիրտ' ձեր. մի՛ շիտթիք, մի՛ վարտաք, մի՛ յաստատիք, անոնք վերջնական եւ յաստատեցուցիչ չեն: Ինչպէս խոստացուց, երկնուսը Հօր կ'երթում որ ձեզի ալ տեղ պատրաստեմ, եւ պիտի գտնեմ որ ձեզ անեմ ու մէկտեղ սանիմ: Եթէ ինձի անեցած սէրերնիւ ճշմարիտ եւ հաստատուն է, պէտք է մանաւանդ արտաբանեք, որ երկնուսը Հօր քովը երթալով, անոր կամքը կատարած եւ անոր հրամանը գործուցած կ'ըլլամ, ինչպէս պտտատարութիւն է ամենուն հմմտար մեծին հրամանը կատարել, եւ երկնուսը Հայրը աւելի մեծ է քան Որդի Մարդոց: Ըլլայիքները մանրամասնորոք պատմելու, թերեւս ժամանակէն առաջ ձեզ պարեպնելու ծառայած կ'ըլլայ, սակայն միւս կողմէ ալ օղակար է, վասն զի երբոր փորձանքները սկսին, կը յիշէք թէ անոնք ամէնքը արդէն եւ դուշտիմը էի, եւ վտահ կ'ըլլաք որ ձերտարութիւններէն ետքը դալլեք յաջութեանը կը դալլեք: Ա՛լ խօքս չէրկնցնեմ, պէտք եղածները բացատրեցի ձեզի, միւս կողմէ ալ վերջին ժամը ժողովար, ստանան իւր հակառակութեանց ստարտիչը պիտի յանայ ինձի գէտ եւ իմ Աւետարտիկն զէմ, կարծելով զիս կորսնցնել եւ Աւետարտը ջնջել: Ասկայն նա իր սշտը ինձի գէտ պիտի չկրնայ ցուցնել, իմ վրաս եւ իմ զարծիս վրայ իր կարծած տարաթիւնը պիտի չգտնէ, այլ բնորոշատակն պիտի յայտնուի որ ես Աստուծմէ պարտցած եմ եւ գործս Աստուծմէ պաշտպանուած է, թէ ինչ որ ըրի Երկնուսը Հօր հրամայածն էր, եւ ինչ որ գործեցի երկնուսը Հօր սիրտն համար ըրի, եւ ինչ որ չիմակ ալ կ'ընեմ՝ Երկնուսը Հօր պատուէրն է որ կը զործադրեմ»:

Ինչպէս յայտնուցէս կը տեսնուի, Յիսուսի այս խօքերը իւր վերջին եւ բարոյական կտակին փակումը կը կարգէին, եւ աւելի եւս շարունակելու միտք չեն ցուցներ. իսկ պարտւումով իմաստներն ալ, արդէն նախընթացարտը բացատրուածներն են: Յիսուսի խօքը վերջացնելու նպատակը աւելի յայտնի կ'երպով կը տեսնուի աւետարանիչին Յիսուսի բերանը դրած խօքերէն: Օ՛՛՛, արի՛ւ գնացուէ աստի, որ ըսել է. «Ա՛լ բաւական է, ելէ՛ք, այս տեղէն մեկնե՛ք, եւ տեղերնիս երթանք»: Ասոր հետեւն պէտք էր զատկական ընթրիքին վերջին բաժանի օրհնել, եւ վերջին երգը երգել եւ ճամբայ ելլիլ: Բայց այնպէս չ'ըլլար. ո՛չ Յիսուս եւ ոչ ալ առաքեալներ տեղերնէն չեն ելլեր. կամ Յիսուս է՝ որ սիրտին ներքին զեղումէն մղուած՝ նորէն խօսելու կը սկսի, կամ առաքեալներն են՝ որ հարցումներով եւ ստույգարկներով նորէն Յիսուսը խօսելու կը յարգորեն: Վերջապէս կտակի ջարդին առաջին մտոր փակուելէն ետքը, նորէն երկրորդ մաս մը կը բացուի, առաջինէն ալ տարբեր նիւթերով, այլ առաջինէն աւելի բնորոշակ բացատրութիւններով: Այս մասն է որ պիտի պարզարահենք, բայց կ'օգտեմք աւելի համառօտ սն մը պահել, կրկնութեանց մէջ չիշնարու համար:



Շք. է. օր Հոգեգալստեան: Եր 1.1-10, 38.1-13: Բ. Պտ 2.9-22: Մտ 2.16-18:

ԿԱՔՈՂԻԿՈՍԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Կաթողիկոսն է Նաեիրայեանութեան գլուխը:

Պէտք է գիտել նաեւ որ Հայ Եկեղեցւոյ Նաեիրայեանութեան մէջ Կաթողիկոսութիւնը աւելի բարձր ստատիճան մըն է քան Պատրիարքութիւնը:

Հայ Եկեղեցւոյ և Հայ Մտանագրութեան մէջ Կաթողիկոսին կը արուին ՊԱՀԱՆԱՅԱՊԵՏ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ, ՄԱՅՐԱԳՈՐ, ՊԱՏՐԻԱՐԿ արտգոսներն ալ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Քահանայ, Եպիսկոպոս և Կաթողիկոս մ'ը միայն կը ձեռնադրուին, ալ նաեւ կ'օծուին Ս. Միւսնով:

Քահանային ճակատը և ալ ու ձախ ձեռքերը կ'օծուին:

Եպիսկոպոսին վերին ճակատը և ալ բլթամտաը կ'օծուին:

Կաթողիկոսի գլխուն գոգաթը կ'օծուի՝ ճառագայթածեւ խաչի ձեւով:

Քահանան կը՝ ձեռնադրուի և կ'օծուի Ս. պիսկոպոսէն:

Եպիսկոպոսը կը ձեռնադրուի Կաթողիկոսէն, աւելի քան իր իրաւունքները սերտ կախիկ պահելու, եւ կ'օծուի Կաթողիկոսէն և կ'ընչուի մասանի ալ ճկայթի վրայ: (Կաթողիկոսը մասանին կը կրէ ալ մասանեմտին վրայ):



գուանարանական, մեկնաբանական ոչեւայլ ծանրաշխարհ խնդիրներու վրայ: Դժբախտաբար, ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ իրիւս պարզ տիպարու մտացած է այժմ:

Ինչպէս որ Կաթողիկոսին վերապահուած է Հայ Եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքը, նոյնպէս սնոր վերապահուած է Ս. Միւսնովի օրհնութիւնը:

Հայ Եկեղեցւոյ մէջ այժմ մէկ ՄԻԿԻՈՒՆ ձեռք կամ ԻԿՂ ՕՏՈՒԹԻՒՆ, որով կը կրտսրուին բարձր օծումներ և սրբապաշտներ:

Սովորութիւն եղած է երեք տարին անգամ մը կատարել Ս. Միւսնովի օրհնութիւնը: Հայ Ժողովուրդը խորանկ բարեպաշտութեամբ և մեծ բազմութեամբ ներկայ կ'ըլլայ մեծաշորհնէքի հանգիստութեանը:

Կաթողիկոսութիւնը «ցլիտնա» պաշտօն մըն է Հայ Եկեղեցւոյ մէջ, իսկ Պատրիարքութիւնը՝ ոչ, մա՛նաւանդ կ. Պարթևը:

Կաթողիկոսն է նաև որ վերին և վերջին սրբապաշտները և զճիւղները կուտայ օրհնական դժուարութիւններու առջև կամ չնախաձեռուած ու անախնկալ սարսաղաներու մէջ, շք օրհնակ մա՛սանտիւն և կարգապահական խնդիրներու շուրջ, եւ այլն:

Կաթողիկոսը կը ձեռնադրուի և կ'օծուի 12 Եպիսկոպոսներէ, որոնց երկնազօնը ձեռնադրութեան կարգով կը նախադահէ ձեռնադրութեան և օծման հարկէն, և օծման տանն երբ նախագահ Եպիսկոպոսը միւսները կը թափէ Կաթողիկոսին գլուխը, բարձր Եպիսկոպոսներ ճառագայթածեւ խաչի ձեւով կը տարածեն վաչի դադաթի վրայ:

Երբ 12 Եպիսկոպոս չգտնուի, երեքէն պակաս ըլլալու պայմանով, զանաւորներով կը ձեռնադրուի և կ'օծուի Կաթողիկոսը:

Արքեպիսկոպոսութիւնը տիրուս մըն է, ո՛չ ձեռնադրութիւն ունի, ո՛չ ալ օծում. Կաթողիկոսը կը շնորհէ վաչի Կոնդակով:

Նոյնպէս Պատրիարքը, ո՛չ ձեռնադրութիւն ունի, ո՛չ ալ օծում: Եպիսկոպոսութենէ կը կոչուի Պատրիարքութեան, և եթէ սրբէնչունի Արքեպիսկոպոսութեան տիրուս, քրօթած Արքեպիսկոպոս կ'ըլլայ և Կաթողիկոսը Կոնդակով մը կը շնորհուորէ վաչի:

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ՎԱՐԳԱՊԵՏԱԿԱՆ (Doctoral) տատիճան մը կայ, որ ձեռնադրութեամբ կը արուի ամառի քահանաներուն՝ Կաթողիկոսներու կողմէն:

ՎԱՐԳԱՊԵՏԻՆ պաշտօնն է Բիթուանէական հաւատքի սւտուցում և քարոզութիւն:

Ատիկա միջին դարուն տեղծուած տատիճան մըն է, արդիկուս համար տղէս կամ անպատրաստ Եկեղեցականները որ չիտան



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱՔՈՂԻԿՈՍԻՆ ՄԾԾԻ ՅԱՆՆ ԿԻԼԻՊՈՅ

զերու համար բժշկութիւններ ըրեր եւ, զու քաղաքիս համար ալ ըրէ: Ասկայն եւ ալ միւս ուսակը պիտի յիշեցնեմ. Ձե՛ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրաւմ. մարդ իրեններուն առջեւ կարեւորութիւն չ'ունենար: Ասանկ ալ եղած է ի սկզբանէ անտի, մարդտրէնիւնն ալ օտարներ օգտուած են եւ իրենցներ անմասն մնացած են: Երբոր Եղիայի սասն երեքուկէս տարի երաշտութիւն եղաւ եւ ընդհանուր սով տիրեց, Իսրայէլացուց տուներէն ոչ մէկը բախտուարուեցաւ Եղիայի ներկայութեամբ, այլ միայն Սարեիթա բնակող սիզոնացի կիներ: Եղիսէի սասնն ալ բորտութիւնը ընդարձակ վարակած էր Իսրայէլացիները, եւ անոնցմէ ոչ մէկը սրբուեցաւ Եղիսէի հրաշքով, բայց եթէ ասորի նէէմանը (Պ. Թագ. Ժ. 8-16, եւ Պ. Թագ. Ե. 9-14):

Յիսուսի տուած լացատրութիւնը Նապարէթցոց ահանջին իւր արհամարհանք հնչեց, սրտհետեւ Եիսուս պիւրենք հրաշք ընդունելու անարժան եւ մինչեւ խզ հեթանոս անձերէ աւելի ստորին կը սեպէր: Ինքզինքնին պարզապէս նախատուած պրացին. առջի պարճացումնին, որ սրտաբուխ ալ չէր, բարկութեան փոխուեցաւ եւ իրենց քաղաքացիին վրայ իշխանութիւն ունենալու միտքով եւ անոր ըրած անարդունքին վրէժը հանելու համար, Յիսուսի վրայ յարձակեցան, բռնեցին, ժողովարանէն դուրս հանեցին եւ փոխանակ բարկոճելու, ինչ որ Հրէից սովորական ժողովրդային պատժոյն վերաջն էր, սմբոխով ու աղմուկով Յիսուսը հանեցին մինչեւ յերան դապաթը, որուն սարսուղ շինուած էր Նապարէթ քաղաքը, որպէս զի անոր դապաթը դանուող դահալէժ ժայռէն վար գլորեն եւ սպաննեն:

Յիսուս թողուց ու ներեց՝ որ սրահ մը իրենց բարկութեան պայրոյթը յաղեցնեն, ուստի ս'չ ժողովարանին մէջ եւ ոչ լեռն ի վեր անոնց ըրածը չարդիւնեց եւ զինքը չարաշտպանեց. իսկ չար խորհուրդը շիտուց որ գործադրուի: Հաղի թէ սկսած էր քարոզութեան, իր տնօրինական դործունէութեան շրջանը սէտք էր ուսուցէր. կամ ինչպէս Աւետարանի լեզուով կը բացատրուի, տակաւին չէր հասած իր կամատոր մահուան ժամանակը, անոր համար երբոր Նապարէթի յերան դապաթը հասան եւ կարճեցին որ Յիսուսը դահալէժ ընելով պիտի սպաննեն, ան ընդհակառակն անոնց ձեռքէն պառտեցաւ եւ անոնց աչքէն աներեւոյթ եղաւ, մէջերնէն անցաւ ու չտեսան, եւ Նապարէթ չըարձաւ, այլ թողուց այն քաղաքը եւ Կափառնատմի ճամբան բռնեց ու հեռացաւ:

Այդ եղելութիւնը ամբողջաբար մեկի պտտմողն է Ղուկաս, սակայն Յովհաննէս աւետարանիչն ալ միջանկեալ քանի մը խօսքերով կ'ակնարկէ նոյն գիպուածին: Ըստ սրբմ Յովհաննէս ալ յառաջ կը թերէ Մարգարէ յիւրաւմ գաւառի պատիւ աչ ունի առածը, որուն իմաստը չէր արդարանար՝ եթէ Նապարէթի դիպուածին չակնարկէր, ինչու որ նախնութաց խօսքին մէջ ըսուած էր, թէ Յոյժաւ ելիմ նա ի Դալիլիա, ընկալան գնալ Գալիլիացիքէն. Գալիլիացուց բնդունելութիւնը եւ իր դաւառին մէջ անընդունելութիւնը իրարու չէին կապեր, եթէ չգիտնայինք որ ոչ թէ Դալիլիացուց ընդունելու, այլ Նապարէթցոց ընդունելուն կ'ուղչ տկնարկել աւետարանիչը:



† Շք. Տօն արքայն Գրիգորի Լուսաւորչին
մերոյ ելանելոյն ի վիրապէն: Իմաս 5.1-8:
Եւ 60.20--61.7: Եբր 13.17-21: Մտ 19.27-
29:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՆՇԽԱՐՆԵՐԸ

Ս. Գրիգոր Լուսաւորչի արքայն նշխարները կը նկատուին Հա-
յաստանեայց եկեղեցւոյ նուիրական արքուիքուններէն:

Արքայն մասունքներ կը գտնուին եկեղեցական հետեւեայ կեդ-
րոններուն մէջ:

— Ս. ԷԶՄԻԱՄԻՆ.— Աջերէն կարեւոր մասունք մը կը պահուի Ս.



Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը Էջմիածնի մէջ (1637 յ.)


Էջմիածնի դանձաւան մէջ, Ամենայն Հայոց Հայրապետութեան հսկո-
ղութեան տակ: Գանձաւանէն դուրս կը բերուի ընդհանրապէս Ս.
Միւստի օրհնութեան աւիթով — 7 տարին անգամ մը—:

— ԱՆՔԻԼՈՒՍ-ԼՈՒՍԱՆԱՆ.— Աջերէն կարեւոր մասունք մը կը



Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը — յԱՅՔԻԼՈՒՍ —


պահուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան դանձաւան մէջ, Վեհափառ Կա-
թողիկոսի հսկողութեան տակ: Գանձաւանէն դուրս կը բերուի ամէն
տարի Ս. Գրիգոր Լուսաւորչի «Մուսն ի վիրապ» տօնին, որ նոյն
տօնն զգարի վանք՝ ուխտի Օրն է: Ամէն տարի հազարաւոր ուխտո-



Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջն Արկղը — յԱՅՔԻԼՈՒՍ —

ւորներ Ս. Պատարագէն եւ Արքայն Թափօրէն հար, աւիթը ունին եր-
կիւղածութեամբ զայն տեսնելու եւ խորանին կամ թոփին առջեւ համ-
բուրելով՝ կատարումն ուխտի աղօթք մը մրմնջելու: Նոյն Արքայն
Այլը, հոն եւս կը գործածուի միւստիօրհնութեան ընթացքին:

— ԱՔՈՍ ԿՂԶԻ.— Թանկագին մասունք մըն է Ս. Գրիգոր Լուսա-
ւորչի գանձը, որ կը գտնուի Աթոս յունական կղզիին, Կրէկորիու
վանքին մէջ:



Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր Տաճարը յԱՅՔԻԼՈՒՍ—Լիւրճան

Միացեալ Նահանգներու մէջ, մեղի ծանօթ են նոյն անունով Հա-
յաստանեայց եկեղեցիները հետեւեայ քաղաքներուն մէջ. Անիւրհո,
Փառսիկը, Փոսատիւն, Սան Տրանսիւրօ, Տրեզնօ, Մէնթ Բարդին
(Գանատո) եւ այլն:

Որքա՞ն ցամկայի պիտի ըլլար, որ մեր Ս. Աթոններու ճարտապետ-
ները, կրօնական-եկեղեցական օրացոյցներուն մէջ, միաբանութեանց
անդամներուն, առաջնորդութեանց եւ այլ օգտակար ծառայութեանց եւ
նետաքրքրական ցանկերու կողքին, բաժին մըն ալ յատկացնէին գործօն
եկեղեցիներու անունները Աշխոյ, եւ անոնց հասցէները՝ ի Հայաստան եւ
ի սփիւռս աշխարհի:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՏԻՇԱՏԱԿԸ

Դարերու ընթացքին, Ս. Գրիգոր Լուսաւորչի յիշատակը վառ
պահուած է Հայաստանի մէջ եւ արդիականութեան ընթացքին՝ հայա-
շատ կրթիչ բոլոր քաղաքներուն եւ դպրոցներուն մէջ համանուն եկե-
ղեցիներու կառուցումով:

Անթիւ եկեղեցիներ նուիրուած են Մեծ Սուրբի յիշատակին: Ա-
նուն մը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ որ ոչ միայն կրօնաբար հմայք մը
կը ներշնչէ, այլեւ կը տածէ ազգաբարձը զգացում, բովանդակութիւն
նոյն տանն:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքի տաճարը՝ յԱնթիւ-
լիս, Լիբանան, կը կրէ Ս. Գրիգոր Լուսաւորչի տիւնը:

Այսօր եւս Հայաստանի եւ սփիւռքի տարածքին կան նկատաւելի
թիւով եկեղեցիներ, որոնք կը կրեն Մեծ Լուսաւորչի անունը:

† Կիր. Ա. Կիրակէ գկնի Հոգեգալստեան:

Ակիզքն յարութեան կիրակէից եւ յիշա-
տակ Եղիա մարգարէին: Գ. Թ. 4 18-29-46:

Դ. Թ. 4 2.1-15: Յ. 4 5.16-20: Ղ. 4 4.25-30:

ՅՈՒՆԻՍ ԲՈՒՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(4. 25-30)

LUKE

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. —

25 «Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազ-
մաթիւ աշրիներ կային Եղիայի սրբուն, երբ երեքու-
կէս տարի երկինքը շանճրեւեց եւ ամբողջ երկրին մէջ
26 սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ սուէ մէկուն
չղրկուեցաւ, այլ զրկուեցաւ Սիցոնի մօտիկ Սարեփթա
27 դիւղը բնակող աշրի կնոջ մը: Եւ յայտ, Եղիսէ մար-
գարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բարոսներ
կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն
Նէեման անունով ատորի մը»:

28 Այս տկնարկութիւնները յսելով՝ Ժողովարանին
29 մէջ դանուողները բարկութեամբ լեցուեցան: Եւ յան,
Յիսուսը քաղաքէն դուրս հանկոյն եւ դահալէժ ընե-
լու նորատակով դաշն տարին մինչեւ կատարը այն լե-
30 բան, սրուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց
Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

²⁵But in truth, I tell you, there were many widows in Israel in the days of E-l'i'jah, when the heaven was shut up three years and six months, when there came a great famine over all the land; ²⁶and E-l'i'jah was sent to none of them but only to Zar'e-phäth, in the land of Si'dön, to a woman who was a widow. ²⁷And there were many lepers in Israel in the time of the prophet E-l'i'sha; and none of them was cleansed, but only Nä-a-män the Syrian. ²⁸When they heard this, all in the synagogue were filled with wrath. ²⁹And they rose up and put him out of the city, and led him to the brow of the hill on which their city was built, that they might throw him down headlong. ³⁰But passing through the midst of them he went away.



Յիսուս Գալիլիոյ պոստոններուն մէջ զանց րրած էր իր բնակավայր քաղաքը՝ Նազարէթը, սրուն բնակիչներուն վրայ վստահութիւն չունէր, որովհետեւ Յիսուսի մանկութիւնը եւ երիտասարդութիւնը, անշուք կեանքը եւ սովորական կենցաղը տեսած լինելով, իրեն նկատմամբ մեծ դազաւար չէին կողման եւ չէին ընդունիր՝ որ հիւսն Յովսէփին որդին կրնայ Մեսիա ըլլալ: Այսուհանդերձ պէտք էր անկամ մըն ալ անոնց հանդիպել, որ իրենց թերահաւատութեան պատճառով չունենան. պէտք էր անոնց ալ Աւետարանի վարդապետութիւնը խօսած ըլլալ: Կրնար յուսացուիլ, թէ Հրէտաւանի եւ Գալիլիոյ մէջ Յիսուսի դասած յաջողութիւնը, պէտք էր Նազարէթցիներու վրայ պարեցութիւն դորձած ըլլար: Այդ նպատակով Յիսուս Նազարէթ կու դայ Հոսովմոյ 781 եւ մեր 28 եւ իր կենաց 32 թուականին սկիզբէն ամիսի մը շաբաթ ետք: Ո՛ր որ հան հասած լինելը չէ յիշուած, բայց առաջին շաբաթ օրուան առտան ըստ սովորութեան ժողովարան կ'երթայ, որ 28 տարւոյ Յունուար 31 կամ Փետրուար 7 կրնայ ըլլալ: Այդչափ վատաւորուած եւ հոշակ հանած Յիսուսի ինչ արժեքը խմանալու կերպով մը, Նազարէթցիք զինքը Ս. Գիրք մեկնելու կը հրաւիրեն եւ հասարակ առջեւ կը դնեն: Սովորութիւն էր Ս. Գիրքը փարգու կարգով աւ մեկնել, իւրաքանչիւր շաբաթ հատուած մը սանկելով, բայց Յիսուս առանց այդ կարգին նախու, սրեւէ մէկ տեղ մը բացաւ եւ դիմացը ելաւ Եսայիի սա կտորը. Հոգի Տեսա՞մ ի վերայ իմ. վասն որոյ եւ օժ իսկ զիս, աւետարանի աղօտաց առաքեաց զիս, բժշկի զբեկեալսս սրտիւք, քարոզի զբլեաց գրողութիւն, եւ կարաց տեսանի, արձակի զվիրաւարս ի քաղաքիւմ, քարոզի զստրեկան Տեսա՞մ բնդաւանի (Նա. ԿԱ. 1, 2): Աւետարանին մէջ այդ կտորը յատկ բերուած է Եօթանասնից թարգմանութեան համեմատ, ինչպէս է մեր Աստուածաշունչն ալ. իսկ երբայական օրինակը, ուսկից թարգմանուած է յատենականը, ունի այսպէս. Հոգի Տեսա՞մ ի վերայ իմ, զի օժ զիս Տէր, աւետել հեզոց առաքեաց զիս, զի բժշկեցից զբեկեալսս սրտիւք, եւ քարոզեցից զբլեաց գրողութիւն, եւ փակելաց գրացումն, եւ քարոզեցից զամն հաշտութեան: Իմաստները շատ չեն տարբերի եւ մեր զիտպութիւնը անոնց համար է, որոնք երբայական օրինակին կառչած՝ Եօթանասնից թարգմանութիւնը կ'անարգեն, տանց յիշելու որ Աւետարանն ալ Եօթանասնից թարգմանութեան կը հետեւի:

Եսայիի այդ հատուածը մեծապէս մարդաբնութեանց գլխաւորներէն է, եւ այսպէս ալ ընդունուած էր հրէական օրէնսդաներէն եւ ժողովուրդէն, եւ հետեւաբար մեծ եղաւ ժողովարանի ունկնդիրներուն հետաքրքրութիւնը, թէ Յիսուս ինչ բացատրութիւն պիտի տայ: Ընթերցումը աւարտելէն, զիրքը փակելէն եւ տեղը դնելու համար պաշտօնէին յանձնելէն ետքը, ամէնուն աչքերը լսին կերպով Յիսուսի վրայ սեւեռած կը մնային: Յիսուս հաստատելին մեծապէս թիւնը յայտնելէ յետոյ, անոր կատարումն ալ իր վրայ լրացած ըլլալը տեսցուց. «Ինչ որ, ըսաւ, Եսայի կանուխէն գուշակած էր, ահա այսօր դուք ձեր սկիանջով անոր կատարուիլը կը լսէք», եւ շարունակելով, Երկնից Արքայութեան վարդապետութիւնը բացատրեց այնպիսի բարձր եւ շնորհալի կերպով մը, որ ամէնքը ամբարտաւան եղած իրարու կը փոխային. «Հիւս Յովսէփի որդին, մեր պիտոյն Յիսուսը չէ՞ արդեօք, հաղա ս'ըրտեղէն ո՞ր այդչափ իմաստութիւն եւ այդչափ շնորհք ստացաւ»: Նազարէթցիներուն դարձապէս ամուլ եւ անարտայ դարձացում մըն էր, որ անոնց սիրտին մէջ հաւատք չէր յարուցաներ եւ չէին ուզեր ընդունիլ՝ թէ իրենց քաղաքացին Յիսուսը իրաւքնէ Մեսիան ըլլայ:

Վարդապետութեան ճաշակը տանելէն ետքը, կ'ուզէին որ ինքզինքը ցուցնելու համար հրաշքներ ալ ընկ. լսած էին որ Կափառնաթափ, Կանայի, եւ ուրիշ քաղաքներու մէջ հրաշքներ րրած էր. «Հոս ալ ըրէ՛, կ'ըսէին, որ մենք ալ տեսնենք»: Ասկայն հաւատքով բժշկութիւն հայցողներ չէին որ այս կ'ըսէին, այլ պարզապէս տեսարանի իտղեր տեսնել ուզողներ, հետեւապէս չուզեց զուհանել անոնց թերահաւատ հետաքրքրութիւնը: «Ինչի պիտի կրկնէք, ըսաւ, սովորական առակը. Իժիշկ; բժշեա՛ զանձն քս. ուրիշ տե-

† Կիր. Բ. Կիրակէ գկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի: Առ 9.1-6: Զք 3.7--4.9: Եբր 9.1-10: ԹՀ 10.22-30:

ՅՈՒՆԻՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ՅՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

JOHN

(10. 22-30)

22 Զմեռ էր. Երուսաղէմի մէջ տաճարին նաւակա-
 23 տիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս
 24 տաճարին Աղոթոմնի սրահին մէջ կ'երթեւեկէր, երբ
 իր շուրջ հաւաքուեցան հրեաները եւ հարցուցին. «Մին-
 չեւ ե՞րբ մեր հազին պիտի հանես. եթէ դուն ես Քրիս-
 տոսը՝ յատկ ըսէ՛ մեզի»:

25 Յիսուս պատասխանեց. «Արդէն իսկ ձեզի ըսած
 եմ, սակայն չէք հաւատար: Այն գործերը որ Հօրս ա-
 նունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ո՛վ
 26 եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչ-
 27 խարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք
 28 ճայս կը լսեն եւ կը հետեւին ինձի, ու ես անոնց յա-
 յտենահան կեանք կու տամ, բնաւ պիտի չմեռնին:
 Ո՛րք ոք պիտի կտրենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս:
 29 Հայրս այդ ոչխարները ինձի տուաւ, եւ ոչ ոք կրնայ
 յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ
 30 Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»:

22 It was the feast of the Dedication at Jerusalem; 23 it was winter, and Jesus was walking in the temple, in the portico of Solomon. 24 So the Jews gathered round him and said to him, "How long will you keep us in suspense? If you are the Christ, tell us plainly." 25 Jesus answered them, "I told you, and you do not believe. The works that I do in my Father's name, they bear witness to me; 26 but you do not believe, because you do not belong to my sheep. 27 My sheep hear my voice, and I know them, and they follow me; 28 and I give them eternal life, and they shall never perish, and no one shall snatch them out of my hand. 29 My Father, who has given them to me, is greater than all, and no one is able to snatch them out of the Father's hand. 30 I and the Father are one."



Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ընդհանուր տեսքը

ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆ.— Ս. Լուսաւորելը Խոր Վերա-
 պէն ելլելէն ու Քրիստոսի հաւատար Հայոց մէջ քա-
 ռպիլ ոկրելէն ետքը տեաւ այն նշանաւոր տեսիլքը,
 աւր Միածինն երկինքէն իջնելով՝ ձեռքը բռնած ոսկի
 մուրճով բաղխեց այն տեղը՝ ուր էր Սանդարտեանի
 գեանապետ մեհեանը եւ այժմ կը դանուի էջմիածնի
 տաճարը. եւ այս հրաշայի կերպով նշանակեց Հայ Ե-
 կեղեցւոյ երկնային հաստատութիւնը: Այդ տեսիլքին
 օրը ճշուելով եւ թուականները զմեկով կը զանենք
 թէ տեղի ունեցան 302 Յունուար 25-ին. իսկ Վերա-
 պէն ելլը տեղի ունեցած էր 301 աշնան: Միածնի
 իջումն ու Հայ Եկեղեցւոյ հաստատութիւնը թէ՛ բնոյ-
 հանրապէս Քրիստոսի Եկեղեցւոյ եւ թէ՛ ի մասնաւորի
 Հայ Եկեղեցւոյ տօնն է, եւ իր բեկեղեցւոյ տօն կը
 կատարուի Հաղեղաշուտաէն ետքը եկող Բ. Կիրակին,
 Զատիկի Ժ. Կիրակին, կամ Զատիկէն 64 օր ետքը:
 Միշտ 35 օրերու շարժականութեամբ՝ Մայիս 21-էն
 մինչեւ Յունիս 27 կրնայ հանդիպիլ: Այդ տօնին ա-
 նունը դրուած է «Տօն Եկեղեցւոյ հաստատեալ ի Ս.
 Լուսաւորէջ» կամ աւելի համառօտ կերպով «Տօն Կա-
 թուղիկէ էջմիածնի»:

Նաւակատիք իր ստիւրական եւ զօրձնական խմատով կը նշանակէ, նոր շինութեան մը բացման կամ նուիրողորձման հանդէսը: Նաւակատիք անուը կը տրուի նաեւ ուրի հանդէսին սարեղարձի օրերուն: Այսպէս նոր եկեղեցւոյ մը նաւակատիքը կը կատարենք անոր բացման եւ օծման օրը, եւ նաւակատիքը կը տօնենք բացման սրբան սարեղարձնելուն: Աւետարանին յիշած Նաւակատեաց տօնն ալ Երուսաղէմի տաճարին կը պատկանի: Առաջին տաճարը Սողոմոնի շինածն է, որուն նաւակատիքը տեղի ունեցաւ Քրիստոսէ 1008 տարի առաջ, Քշրի կամ Անթան ամսոյն մէջ (Գ. Թագ. Բ. 63-66), բայց այդ նաւակատիքը տարեկարձի տօն չունեցաւ: Երկրորդ տաճարը Չօբարթէլի շինածն է, որուն նաւակատիքը կատարուեցաւ Քրիստոսէ 517 տարի առաջ, Ալար ամսոյ 3-ին, եւ այս ալ նաւակատիքի տօն չունեցաւ երբեք (Բ. Ալր. Ա. 15-16): Երրորդ Պաղեստին Սելուկացւոց ներքեւ էր, Անտիոքոս Եղիսիան Երուսաղէմի տաճարը կողոտկեց, եւ նոյնիսկ տաճարին մէջ կուտք կանդնեց (Ա. Մակ. Ա. 23 եւ 57), որով Աստուծոյ անուան նուիրուած տաճարը սղծեալ համարուեցաւ, եւ պէտք էր զայն նորէն սրբել եւ նուիրարծել: Այդ արարողութիւնը, որ նոր նաւակատիքի կերպարանը առաւ, կատարուեցաւ Յուդա Մակարէի ձեռք, Քրիստոսէ 164 տարի առաջ, Քուտեւ ամսոյ 25-ին (Բ. Մակ. Ա. 5): Այնքան մեծ նշանակութիւն ունեցաւ այդ զօրձողութիւնը, որ Յուդա Մակարէի կարգադրութեամբ որոշուեցաւ զայն ամէն տարի հանդիսապէս տօնել Քուտեւ 25-ին, եւ որ Հրէից մէջ ծառայէր Տօն Ճրտեաց կամ Ճրտեայոց անւանով, եւ ութ օր շարունակ լուստոյտութիւններ կը կատարուէին ամէն տուններու զուաներուն վրայ (Բ. Մակ. Ա. 8): Հրէական աւանդութիւն մը կը պատմէ թէ երբ Յուդա Մակարէ տաճարը սրբելու արարողութիւնը հրամայեց, Երուսաղէմի մէջ տաճարի լուսակներնուրեւ համար սուրբ ձէթ չլուտուեցաւ, բայց եթէ փոքրիկ սրուակ մը քահանայապետական կնքով մնացած, որ հաղիւ թէ օրուան մը պէտքին կրնար բուել, սակայն ամբողջ շարաթ մը այս ձէթը տաճարի շահերուն զօրձումուեցաւ ու չսպառեցաւ: Ահա այդ տօնն էր որ Հաովմայ 782, եւ մեր թուականին 29, եւ Յիսուսի կեանքին 33 սարսոյն ալ պիտի կատարուէր, եւ որ հաւանականապէս հաշուով այն տարի մեր Գեղարձիկեր 20-ին կ'իջնար, ինչ որ Աւետարանի պատմութեան ալ ճշդիւ կը պատասխանէ, որովհետեւ Յովհաննէս յայտնապէս կը գրէ. Աղիմ յայնմամ Ռասակատիքն յերուսաղէմ, եւ ամենն էր:

Յիսուս ճողաւարահայաց տօնէն ջիջ ետքը Երուսաղէմէ մեկնած էր (§ 145), եւ Պերէայի կողմերը պտոյտ մը ընելէ ետքը անկէց կամաց-կամաց նորէն Երուսաղէմ մօտենալու սկսած էր (§ 162), եւ այժմ կը տեսնենք որ նաւակատեաց տօնին արդէն Երուսաղէմ պարձած է:



ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ, ՄԵԾՆ

Հ Ա Յ Ո Յ Ն Կ Ե Ղ Ե Յ Ի

Սասիկ երկու գուռակ սենցած էր, Պսոյ եւ Աթա-
նայինէ: Երկուքն ալ հագեւորական կեանքէ հետու
մտայած, եւ իրենց կենցաղովը հանրային զբոսման
չէին սիրելի եղած: Աթանայինէի որդին էր Ներսէս, որ
իր ընտանիքին քրիստոնէական եւ ազգային շնորհները
փայլեցուցած էր իր վրայ կանուխէն: Եբբ Փոսէնի եւ
Մահակի կաթողիկոսական գործունէութեան անշուք
չրջանէն վերջը ամենուն աչքերը նորէն Լուսաւորչի
ասհմին կը գտնուէին, Ներսէս ամենուն ընտրելին կը
գտնուար: Այլ միջոցին դեռ աշխարհական էր նա, եւ
սենեկադարմ Տիրանի որդի Արշակ թագաւորին, որուն
ստիպումովն է որ ընդսենց կրօնասրտական կարգ, եւ
մեծ հանդէսով կեանքիս երթալով եպիսկոպոս մեա-
նադրուեցաւ: Եւսերիս եպիսկոպոսէն: Ըստ ազգային
ուսանողութեան, Ներսէսի հետ մեծանորուցեալ նաեւ
Բարսեղ, կեանքիս ազգայն էր իրականացուց: Մեծա-
դրութեան պահանջ Ս. Հոգին աղանակեցաւ իջաւ եր-
կուքին վրայ միանգամայն, իսկ եբբ Ներսէս պատա-
րագեց երկնային հրեղէն սին մը կրեցաւ. եւ Ներսէսի
դէմքը փայլեցաւ նման Մոյսէսի երևաներուն: Արդ-
հետեւ ուր միջոցին Բարսեղ սկսած էր արդէն փայլել
իրբեւ կողմակերպիչ կրօնաւորական եւ վանական կար-
գերու, ակնհերե է որ Ներսէս մեծապէս ազդուած է
իրմէ, եւ յետոյ Հայաստան մտցուցած է կապաղովկիոյ
մէջ տեսած իր բոլոր բարեկորութիւնները: Ներսէսի

հայրապետական գործունէութեան մէջ ամենէն բարձր
մեծանորին է ՅՅԻն կամ ՅՅԵԻն Աշտիշապի մէջ գումարած
ժողովը: որ կանոններ սահմանուեցան ընտանեկան
կեանքի սրբութեան, հանրային կեանքի բարելաման,
բարեկորման հիմնարկութեանց հաստատման եւ
փանական կողմակերպութեանց համար: Հուանական
չէ որ Մեծն Ներսէս ներկայ գտնուած ըլլայ Կ. Պոլսոյ
ժողովին, որ գումարուեցաւ ՅՅԻն, փանդի ինք վտա-
նուած է առ առաւելն ՅՅԵԻն: Ըստ ուսանողական պատ-
մութեան, Արշակ թագաւորի ընտանեկան գեղը եւ ցտի
կեանքին հանդէպ Մեծն Ներսէսի ցոյց տուած կշտամ-
բիչ վերաբերմանը պատճառ եղաւ որ Արշակ՝ հայ-
րապետութենէն ձգելու համար Ներսէսը՝ Չունակ ա-
նուն մէկը կաթողիկոս մեծանորիս տայ, ցոյց առելի
հուանական է որ կրօնական եւ քաղաքական իշխանու-
թեանց միջեւ գոյացած այս հակասակութիւնը հետե-
ւանք եղած ըլլայ հակամարտութեանը յոյն եւ սրբաբնիկ
քաղաքականութեանց, սրոնց առաջինին կողմը կը հա-
կէր միշտ հայրապետանցը եւ վերջինին՝ արքանիքը,
ինչպէս նաեւ այն իրողութեան թէ Արշակ իր ստեղծել
մտադրած կեդրոնական գործը իշխանութեան համար
վնասակար կը դանկը Ներսէսի կողմակերպած եկեղե-
կական իշխանութեան հետզհետէ ոտայած մեծութե-

նը: Արշակի որդւոյն՝ Պսոյի թագաւորութեան օրով,
Ներսէս առաջին տարիներուն հաշտ վերաբերմունք մը
ունեցաւ արքանիքին հետ: Ինք եղաւ Զիրաւի ճակա-
տամարտին խրախուսիչը: Բայց Պսոյ քանի՜ սկսաւ իր
վրայ ցոլացնել իր հօրը յանդուրն բնաւորութիւնը եւ
քաղաքական ճշտումները, այնքան շուտով սկսաւ Ներ-
սէսի հետ իր անհամաձայնութիւնները: Ժամանակա-
դրական զննութիւններով չի ճշգրտուի մեր պատմիչնե-
րէն ոմանց հաղորդած այն տեղեկութիւնը թէ Պսոյ
թագաւորէն թունաւորման հետեւանք եղած ըլլայ իր
մահը: Մեր եկեղեցական-աղային պատմութեան մէջ
Ներսէս նշանակելի է իբրեւ նախապատրաստող հայկա-
կան ինքնապարթեմի եւ քրիստոնէական վերամեա-
թեան մեծ գործին, որ իրականացաւ յետոյ, Ս. Սահա-
կի եւ Ս. Մեսրոպի օրով, Ասիեկորսն շրջանը պատ-
դարով:



† Կիր. Գ. Կիրակէ գկնի Հոգեգայտեան: Բարեկեան Ս. Գրիգոր Լուսաւորչի պահոց: Եւ 1.2-15: Հր. 6.12-23: Մտ. 12.1-8:

MATTHEW

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(12.1-8)

1 Ծարաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր:

2 Աշակերաները անօթեցած ըլլալով սկսան հասկ

3 փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները տախտակ տեսան,

4 ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերաներդ ի՛նչ կ'ընեն. բան

5 մը՝ որ արգիլուած է Ծարաթ օրով ընել»: Յիսուս պա-

6 տասխտակեց. «Զէ՞ք կարգացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ,

7 երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ

8 տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ,

9 որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօն-

10 ւած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ

11 չէ՞ք կարգացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Ծարաթ

12 օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Ծա-

13 րաթը եւ սակայն տախտակ մեղք չի համարուիր իրենց:

14 Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ


15 հաս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ

16 մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ»,

17 այն առեմ չէիք պատասխարտեր անմեղները, որովհե-

18 տեւ մարդու Որդին Տէրն է Ծարաթին»:

12 At that time Jesus went through the grainfields on the sabbath; his disciples were hungry, and they began to pluck ears of grain and to eat. ²But when the Pharisees saw it, they said to him, "Look, your disciples are doing what is not lawful to do on the sabbath." ³He said to them, "Have you not read what David did, when he was hungry, and those who were with him: ⁴how he entered the house of God and ate the bread of the Presence, which it was not lawful for him to eat nor for those who were with him, but only for the priests? ⁵Or have you not read in the law how on the sabbath the priests in the temple profane the sabbath, and are guiltless? ⁶I tell you, something greater than the temple is here. ⁷And if you had known what this means, 'I desire mercy, and not sacrifice,' you would not have condemned the guiltless. ⁸For the Son of man is lord of the sabbath."



Չատիկը լրացու եւ Յիսուս Գալիլիա դարձաւ, եւ շիտակ կատարուում եկաւ, որ էր իր սովորական բնակութիւնը: Եարաթ օր մըն էր, զոր Դուկաս կը ճշդէ ի Եարաթ-ու յերկրորդում առաջնայն. եւ որուն վրայ թէպէտ աարբեր մեկնութիւններ տուողներ ալ կան, սակայն բաւական յասակ է Դուկասու լրացարութիւնը, որ կը ցուցնէ Չատիկ ութօրէքէն ետքը Հանդիարող երկրորդ Եարաթը, տալին Եարաթին յաջորդողը: Չատիկին ո՛ր օր եկած ըլլալը ճշդիւ դժուար է, տմարտան հաշիւներու շիտթութեան պատճառով, բայց ամէն առթիւ մէջ Չատիկ ութօրէքէն երկու եօթնեակի շուրջ ետքը պէտք է դնել այս Եարաթ օրը, Յիսուսի Երուսաղէմէ Գալիլիա հասնելէն անմիջապէս ետքը:

Յիսուս եւ իր աշակերտները քաղաքին մօտիկ արտերուն մէջէն կ'անցնէին, հաւանաբար պատրի համար, սրովհետեւ Եարաթ օր մը ուղեւորութեան մէջ ըլլալին ենթադրելու չէ: Աշակերտներուն փորը անօթեցաւ, եւ անպաճ առննին ճամբուն ելերքը դանուող եւ արդէն հասունցած արտերէն քանի մը հասկ փրցուցին, ձեռուրներուն մէջ չփեցին, հատիկները փեքիկին լեցուցին, եւ բերաններն նետելով սկսան ուտել: Յիսուսի հետեւ պտրտող եւ դայն մեղադրելու պատճառանք փնտաող Փարիսեցիներէն քանի մը հասը այնտեղ ալ դանուեցան, եւ անմիջապէս ուշակերասաց մօտենալով դիտողութեան սկսան. «Յժը Եարաթ ըլլալը չէ՞ք դիտեր. հասկա ինչա՞ւ հանդիարտի օրէնքը կ'ուրէք, եւ կերակուր պատրաստելու աշխատութիւն կ'ընէք»: Ետքը Յիսուսի դատալով կ'աւելցնեն. «Աշակերտներուդ ըրածը չէ՞ս տեսներ, ինչպէ՞ս կը ներեա՞ որ քու աչիդ ներքեւ Եարաթի օրէնքը հրապարակաւ սանակոխ ընեն»:

Յիսուս փութաց իր աշակերտներուն ըրածը պաշտպանել. հարկաւ աշակերտները Յիսուսի խրատներէն ու հրահանգներէն քաջալերուած կը դորձէին, ինչ որ Յիսուսի պաշտպանելու ջանքէն ալ կը յայտնուի: Իսկ պաշտպանելու փաստը ո՛չ Եարաթի օրէնքը հերքելէն կ'առնէ, եւ ոչ ալ կատարուած աշխատութեան աննշանակ բան մը ըլլալէն, այլ ուղղակի օրէնքի հողիկն թափանցելով անոր դորձադրութեան պայմանները կը բացատրէ: Յիսուսի խօսքերուն մէջէն աւետարանիչներուն իր բղրակացութիւն յստաջ բերած նախադասութիւնը, Ապա ուրիմն սէր է Արդի մարդոյ եւ Եարաթ-ու, իսկ հիմնական փաստն է: Եարաթ օրուան հանդիարտի օրէնքը դրուեցաւ իրքեւ մարդուն պէտքը լրացնելու միջոց, եւ ոչ թէ մարդը դրիճելու եւ անոր փնասելու համար. Եարաթը պիտի ծառայէ մարդուն օգուտին եւ ոչ թէ մարդը պիտի ծառայէ Եարաթին օգուտին. Եարաթ վասն մարդոյ եղիւ, եւ ոչ երբ մարդ վասն Եարաթ-ու: Հետեւաբար երբ որ այնպիսի հարկեցուցիչ պարագայ մը հանդիպի, յորում Եարաթի հանդիարտ մարդուն վնաս մը պիտի բերէ, պէտք է Եարաթը տեղի տայ մարդուն օգուտին, եւ ոչ թէ մարդը վնասուի Եարաթուն օգուտին: Այս սկզբունքը Յիսուսի տեսութեամբ ընդհանուր է, եւ կը պատշաճի ամէն դրակուն օրէնքներու, որք այս տեսակ արգելքներ կամ դրկումներ կը պատուիրեն:

2 Այս սկզբունքը հաստատելու համար Յիսուս յառաջ կը բերէ ուրիշ օրէնք մը եւ անոր արդարացեալ բացատրութիւնը: Օրէնք էր որ Խորանին կամ տաճարին մէջ Առաջաւորաց կոչուած սեղանին վրայ տասներկու հացեր կամ պանեք պիտի կենային շարունակ իբր նաեւ Աստուծոյ. որք իւրաքանչիւր Շարաթ օր թարմ հացերով պիտի փոխանակուէին, իսկ վերցուածները պիտի ուտէին միայն Ահարոնեան քահանայութեան տունէն եղողներ. առանց խորանին կամ տաճարին շրջապատէն դուրս հանելու (Ղեւտ. ԻԿ. 5-9): Արդ Ս. Գիրքը կը պատմէ, թէ Դաւիթ երբ Սաւուղին երեսէն կը փախչէր, իր մարդիկներէն գոտուած եւ քանի մը ընկերներով միայն հանդիպեցաւ Նամբա, ուր էր խորանն ու տապանակը, եւ շատ անօթի ըլլալով հաց խրնդրեց Արիմեէլէք քահանայապետէն: Սա բնաւ հասարակ հաց չունէր պատրաստ, այլ միայն Առաջաւորաց սեղանէն նոր վերցուած հացերը: Արիմեէլէք չկրնալով ներել՝ որ Դաւիթ եւ իրենները անօթութենէ նեղուին ու մնասունին, եւ ապահովութիւն ստանալով որ օրինական պղծութիւն ալ չունին, առանց նախելու որ Դաւիթ եւ իրենները Ահարոնի քահանայական տունէն չեն, Առաջաւորաց հացէն տուաւ անոնց ու կերանք (Ա. Թագ. ԻԱ. 1-6): Օրէնքին բացատրութիւնը օրինաւոր համարուեցաւ, զի Ս. Գիրքն ալ դայի չէ մեղադրած: Դրական օրէնք մըն էր՝ որ հարկին առջեւ տեղի կու տար. նոյն օրինաւորութեամբ այս պարագային մէջն ալ, աշակերտներուն անօթութիւնը եւ անօթութեան մնասը կ'արդարացնէր, Շարաթի օրէնքին հակառակ, բացառաբար հասկ ջայելնին եւ շիւնին եւ ցորենահատերը ուտելնին:

Թէ ի՞նչ պարագայով էր որ աշակերտները այսպիսի անօթութեան մէջ լնկած էին, Աւետարանը չի բացատրեր. թերեւս նոր հասած ըլլալով կամ թէ քարոզութեան աշխատութեամբ՝ Ուրբաթէն կերակուրի պատրաստութիւն չէին տեսած. ամէն առթի մէջ Փարիսեցիները չկրցան Յիսուսի խօսքերուն դէմ դնել, եւ ոչ ալ ըսել թէ հարկաւ առտուրնէ փորերնին կշտացուցած պիտի ըլլային պատյաի չէլած:

Այստեղ դժուարութիւն մը կը կազմէ Մարկոսի Աւետարանին մէջ յիշուած անունը. Առ Արիաբարաւ բառունայապետի (Մարկ. Բ. 26), զոր չեն յիշեր Մատթէոս եւ Ղուկաս. իսկ Ս. Գիրք յայտնապէս Արիմեէլէքի անունը կու տան, որ Դաւիթի օղնութիւն ըրած ըլլալուն համար Սաւուղի հրամանով սպաննուեցաւ ալ (Ա. Թագ. ԻԲ. 16): Իսկ Արիաթար Արիմեէլէքի որդին էր, որ իր հօր եւ անոր զուակաց սպանութենէն ազատուելով Դաւիթի քով ապաւինեցաւ եւ հօրը տեղ ահցաւ (Ա. Թագ. ԻԲ. 20): Աւետարանէն եւ բովանդակ Ս. Գիրքէն որոշ փաստ մը չենք դաներ այս դժուարութիւնը լուծելու: Ամենայն հաւանականութեամբ Մարկոս ալ անուն յիշած չէր Մատթէոսի եւ Ղուկասի նման, եւ յետոյ պատահարաբար մուծուեցաւ այն, կամ թէ Արիմեէլէք անունը ընդօրինակութեանց սխալմամբ Արիաթարի փոխուեցաւ, մանաւանդ որ նման փոփոխութիւն մը ուրիշ տեղ ալ հանդիպած կը դանենք, ուր փոխանակ ըսելու Արիաբար որդի Արիմեէլէքի գրուած է Արիմեէլ որդի Արիաբարայ (Բ. Թագ. Ը. 17): Ուրիշ մեկնութիւններ տուողներ ալ կան, զոր օրինակ, Էրկուքն ալ զոյգ անուն ունեցած ըսել. կամ Արիաթարը իր հօրը

կենդանութեան անոր պաշտօնակից զնեւ. բայց ասոնց սմէնն ալ ենթադրու-
թեանէ անդին չեն անցնիր:

3 Աւրիշ ժամս մին ալ կը յեղ Յիսուս Շարաթու Հանգիստին բացառու-
թիւնը արդարացնելու (Մատթ. ԺԲ. 5-7): «Ձէ՞ք կարդացած, կ'ըսէ, որ քա-
Հանաները Շարաթ օրերը տաճարին մէջ աշխատութիւններ կը կատարեն,
Հանգիստը կ'աւրեն, եւ յոնցաւոր չեն սեպուիր»: Եւ իրօք ալ Մովսէսի օրէն-
քով նոյնիսկ Շարաթ օրերը տաճարին մէջ զոհեր կը մատուցուէին եւ քահա-
նաներ կենդանիները մտրթելու եւ ողջակողելու, եւ նաչի՛ն եւ իւր շաղ-
ւելու աշխատութիւնները կրնային կատարել (Թիւ. 9): Այս պատճա-
ւորանութեան գիմաց Հարիւա Փարիսեցիները պիտի թէին, թէ քահանաները
Շարաթը կ'աւրեն, որովհետեւ Աստուած զոհ ու պատարադ կ'ուզէ: Յիսուս
այս բացատրութեան գիմաց յառաջ կը բերէ Ովսէի բերնով Աստուծոյ ըսածը.
Քաղաքաւարիս կամիս եւ ոչ զգոն (Ովս. 2. 6), ուսկից կը Հեռեւէր որ եթէ
զոհի եւ պատարադի Համար Շարաթը կը լուծուի, ապա եւս առաւել գթու-
թեան եւ սիրոյ Համար, վասն զի Աստուած սէրն ու գթութիւնը զսէնն ու
պատարադին կը նախադասէ: Եթէ տաճարին եւ Աստուծոյ պաշտամունքին
պատիւը աւելի մեծ ըլլալուն, Շարաթի օրէնքը անոր տեղի կու տայ, եւս
առաւել պէտք է տեղի տայ երրորդ տաճարին եւ Աստուծոյ պաշտամունքին
աւելի ընդհանուր կերպով Աստուծմէ նախադասուած զորն մը զանուի, ինչ-
պէս է սիրոյ եւ գթութեան գործը: Յիսուսի այդ պատճառարանութիւնը ա-
ւելի ընդհանուր կերպով Շարաթի օրէնքին հողին ու կերպը բացատրելու
նպատակը ունի, աշակերտներուն մասնաւոր զործէն առիթ առնելով. ինչպէս
որ ուրիշ առիթներու մէջ ալ տեսնք, որ մասնաւոր պարագայէն օգտուելով
ընդհանուր վարդապետութիւններ կը բացատրէ: Բայց հասկերուն մասնաւոր
պարագային ալ պատշաճեցնելով, դիւրին է սիրոյ եւ գթութեան պարագան
տեսնել Յիսուսի ներողամտութեան մէջ, որ գթալով աշակերտներուն տնօ-
թութեան կը ներէր անոնց Շարաթ օրով ալ իրենց անօթութիւնը անցընելու
չափ աշխատութիւն մը ընել: Փարիսեցիք Հաւատարապէս մեղադրած էին ա-
շակերտներուն օրինապանցութիւնը եւ Յիսուսի թոյլարութիւնը:

Ովսէի խօսքէն քաղուած ժամսը Յիսուսի Համար շատ սովորական
ժամս մը եղած է, եւ ուրիշ առիթ մէջ ալ անկէ օգտուելը յառաջ բերած ենք
արդէն (§ 50):

